«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ « Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում »

Հետազոտող ուսուցիչ՝ Արևիկ Մուրադյան

Դպրոց՝ Արմավիրի մարզ, Հուշակերտի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝Չալյան Լիլիթ

Բովանդակություն

1.Նախաբան.....3
2.Գրականության ակնարկ.....5
3.Գործնական համատեքստ 18
4. Ամփոփում..... 22
5.Օգտագործված գրականության ցանկ..... 25

1. Նախաբան

Թեմայի արդիականությունը: Երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության ու հանդուրժողականության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքն ակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել:

Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց ու երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Երեխաների, ծնողների, ուսուցիչների միջև համագործակցային հարաբերությունների ձևավորումն ամենից առաջ պայմանավորված է այն հանգամանքով, թե այդ գործընթացում ավագների միջև ինչպիսի փոխհարաբերություններ են հաստատվում:

Թեմայի նպատակը և խնդիրները: Մեր աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես կազմակերպել ընտանիքին մանկավարժական աջակցության ցուցաբերման եղանակները, որպեսզի պահպանվեն և դաստիարակության սկզբունքները, և անձի համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Ուսումնասիրության խնդիրներն են.

- հիմնավորել դպրոց-ընտանիք փոխգործակցության անհրաժեշտությունը երեխայի դաստիարակության գործում
- ուսումնասիրել դպրոց-ընտանիք-աշակերտ համագործակցության ձևերը
- բացահայտել դպրոց-ընտանիք փոխգործակցության բնույթը:

Աշխատանքի կառուցվածքը: Տվյալ աշխատանքը կազմված է նախաբանից, գրականության ակնարկից, գործնական համատեքստից,ամփոփումից և գրականության ցանկից:

2. Գրականության ակնարկ

Ծնող-դասվար փոխհամագործակցության ձևերը և ուղիները երեխայի ընտանեկան դաստիարակության և ուսուցման հարցերում

«Ընտանիքն ու դպրոցը ափն ու ծովն են: Բայց դա չի նշանակում, որ այն պետք է ամբողջությամբ պոկվի ափից» : Լ. Կասիլ

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում կարևոր դերակատարություն ունի աշակերտերի ծնողների և դպրոցի միջև ամուր կապի հաստատումը, որը անմիջական մասնակիցն ու միջնորդն է դասվարը[1]:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը ժամանակակից դպրոցում բնորոշվում է օբյեկտիվ պահանջներով և անհրաժեշտությամբ.

- ողջ հասարակության կրթադաստիարակչական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
- ընտանիքի կրթական մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ, ընտանիքում դաստիարակչական աշխատանքների բովանդակության և ձևերի շտկում,
- սովորողների ուսման, դաստիարակության հարցերում ընտանիքի, դպրոցի հասարակության պատասխանատվության բարձրացում,
- կրթադաստիարակչական խնդիրների լուծման գործում դպրոցի, ընտանիքի ակտիվ մասնակցության ապահովում.հանդիպման առանձին օրեր, անհատական հանդիպումներ, քննարկումներ, խորհրդատվություններ և այլն:
- հաղորդակցման տարբեր տեխնոլոգիաների կիրառում՝ արագ, ինտենսիվ հաղորդակցում ապահովելու նպատակով,
- Հասարակության մեջ, այդ ինստիտուտների ներսում մանկավարժի, ծնողի հեղինակության բարձրացմանն ուղղված աշխատանքներ,
- անկեղծ, վստահելի փոխհարաբերությունների կառուցում՝ հիմնված մարդկային փոխհարաբերությունների կարևորության արժեքի հիման վրա,
- Բոլոր գործընթացներում ձևական, ոչ իրատեսական մոտեցումների, խրատականության բացակայություն, ջերմ, փոխօգնող հարաբերությունների հաստատում,

[1] Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, Երևան, 2008 էջ 35,36

- Ծնողների մանկավարժների, սովորողների համատեղ գործունեության հնարավորությունների ընդլայնում, զարգացում, պահանջների միասնականացում, նույնականացում,
- Կամավորական, արտադպրոցական, արտադասարանական աշխատանքներում ծնողների, մանկավարժների, սովորողների համատեղ ընդգրկվածության ապահովում,
- Դասարանի, դպրոցի, ծնողների, սովորողների՝ միմյանց հետ արդյունավետ շփումների, կապի հաստատում, հաղորդակցական կարողությունների զարգացում և այլն:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում: Ծնողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով կիրառվում են նրանց հետ կապի տարբեր ձևեր: Առանձին մանկավարժների գործելաոճում այդ կապը սահմանափակվում է ուսումնական կիսամյակի վերջում առաջադիմության արդյունքների ամփոփմամբ, ծնողական ժողովներ անցկացնելով, ուսման մեջ հետ մնացող կամ անկարգապահ աշակերտների ծնողներին դպրոց կանչելով և նախատելով: Նման մանկավարժները վատ գիտեն իրենց աշակերտների ընտանեկան պայմանները և ոչ միշտ են աշակերտների դաստիարակության հարցերը կարգավորում ծնողների հետ համաձայնեցված:

Նպատակահարմար է ծնողների հետ համագործակցությունը կազմակերպել խմբային և անհատական ձևերով: Ծնողական ժողովներում սկիզբառած բացատրական աշխատանքը պետք է շարունակել տանը և դպրոցում ծնողների հետ անհատական հանդիպումների ժամանակ: Ծնողների հետ անհատական զրույցները հաճախ թելադրում են կոլեկտիվ աշխատանքի ձևեր ու բովանդակություն՝ նպաստելով բոլոր ծնողների հետ անցկացվելիք անհրաժեշտ միջոցառումների նախանշմանը և կազմակերպմանը: Երբեմն ծնողական ժողովներն ընթանում են սակավամարդ կազմով: Այդպես լինում է այն դեպքում, երբ դասղեկն անհրաժեշտ շփման եզրեր չի փնտրում աշակերտների ընտանիքների հետ: Հարկավոր է ժողովի օրակարգի մասին նախապես տեղյակ պահել ծնողներին:Պետք չէ ժողովը վերածել

դատի՝ հետ մնացող, անկարգապահ աշակերտների ծնողների նկատմամբ: Այդպիսի ժողովներին ծնողներն աշխատում են չմասնակցել, կամ նույնիսկ ժողովից հետո մարմնական պատիժների են ենթարկում իրենց երեխաներին: Ծնողները երեխաների նկատմամբ խրախուսանքներ և պատիժներ կիրառելիս երբեմն սխալներ են թույլ տալիս: Առանձին ծնողներ իրենց երեխաներին դրամական պարգևներ են տալիս լավ թվանշանների համար, ոմանք անարդարացիորեն պատժում են երեխաներին: Լինում են նաև խելամիտ ու արդարացի խրախուսանքներ և պատիժներ կիրառելու օրինակներ: Դասղեկն ի մի բերելով և կշռադատելով այդ ամբողջ նյութերը, հերթական ծնողական ժողովում կարող է զրույց անցկացել <<Խրախուսանքների և պատիժների կիրառումը ընտանիքում>> թեմայով: Զրույցի՝ կոնկրետ օրինակներով զուգակցումը շատ բան կսովորեցնի ծնողներին: Առանձին դասարաններում ցանկալի է անցկացնել աշակերտների հայրերի ժողովներ և քննության առնել հոր դերը երեխաների դաստիարակության գործում: Այդպիսի ժողովները գործարար աշխույժություն են առաջացնում, նամանավանդ, երբ զեկուցողը կոնկրետ օրինակներ է բերում ընտանեկան դաստիարակության փորձից: Պարտադիր չէ այդ դեպքում անվանել երեխաների դաստիարակությունից խուսափող հայրերի ազգանունները: Ցանկալի է ներկայացնել ընտանեկան դաստիարակության հաջողություններին ու թերություններին վերաբերող կոնկրետ դեպքեր, որպեսզի ծնողները զգան իրենց վրիպումները և անենանհրաժեշտ հետևություններ:

Խրախուսելի են նաև ծնողների և աշակերտների համատեղ ժողովները: Քննության են առնվում ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման հարցերը: Աշակերտները ցուցադրում են իրենց նվաճումները ուսման մեջ, պատմում են տարբեր խմբակներում տարվող աշխատանքների մասին:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ են քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին[2]: Դպրոցում ծնողների հետ դասղեկի հանդիպումները թույլ են տալիս համատեղ ջանքերով վճռել դաստիարակությանև ուսման բարդ հարցեր: Նման պայմաններում անհատական զրույցի ժամանակ պարզվում են ոչ միայն դպրոցականի կյանքի և աշխատանքի դիպվածներ, այլև քննարկվում են նրանց վարքագծի կոնկրետ օրինակներ, ուղիներ են նշվում երեխայի ուսումնական գործունեության, աշխատանքում և առօրյա վարքագծում նկատվող թերությունների շտկման և դժվարությունների հաղթահարման համար: Զրույցի ընթացքում ծնողները կարող են խորհուրդներ ստանալ դպրոցականի տնային ուսումնական պարապմունքներն առավել արդյունավետ կազմակերպելու, նրանց աշխատանքի վարժեցնելու վերաբերյալ և այլն:

Ծնողներին պետք է հրավիրել ոչ միայն այն ժամանակ, երբ աշակերտը խախտել է ընդհանուր կարգապահությունը, կամ սկսել է վատ սովորել, այլև պարբերաբար՝ տվյալ սովորողի արտադասարանական ընթերցանությունն արդյունավետ կազմակերպելու, նրան հանրօգուտ աշխատանքի մեջ ընդգրկելու, երեխայի ընդունակությունը որևէ բնագավառում զարգացնելու մասին պայմանավորվելու նպատակով: Անկարգապահ աշակերտների ծնողների հետ հարկավոր է համաձայնության գալ դպրոցականների վրա ներգործելու միասնական պահանջներ և մանկավարժորեն արդարացված միջոցներ կիրառելու մասին: Ըստ

[2] Методика воспитательной работы. Под редакцией В.А. Сластенина ,- М., 2002, էջ 91:

որում, պետք է միշտ հիշել, որ առավել արդյունավետ է աշակերտների վրա ներգործման խելացի միջոցների մասին հանգիստ, գործարար զրույցը ծնողների հետ, քան հանդիմանությունները և բողոքները նրա հասցեին[3]:

Ցանկալի է ծնողների համար կանոնավոր կերպով անցկացնել ,,Բաց դռների,, օրեր, երբ նրանք կարող են դպրոց այցելել և զրուցել իրենց երեխաների առաջադիմության ու վարքի մասին: Կարելի է դպրոցում և դասարաններում ստեղծել ,,Ծնողի անկյուն,, և այնտեղ տեղադրել ընտանեկան դաստիարակության վերաբերյալ խորհրդատվական նյութեր և ամսագրեր: Ծնողների հետ դպրոցում հանդիպելը օգտակար է ոչ միայն դասղեկին, այլև ուսումնական առարկաների մյուս ուսուցիչներին: Իհարկե, չի կարելի հույսը դնել այն բանի վրա, թե ծնողներն իրենց նախաձեռնությամբ կգան դպրոց՝ ուսուցչի կամ դասղեկի մոտ: Անհրաժեշտության դեպքում պետք է նրանց հրավիրել դպրոց աշակերտների միջոցով:

Նամակագրություն աշակերտների ծնողների հետ: Ծնողների հետ նամակագրության համար հիմնականում օգտագործվում է աշակերտական օրագիրը:

Դասղեկը դրա մեջ կատարվող կոնկրետ գրառումներով ծնողին հայտնում է ուսումնական և հասարակական պարտականությունների նկատմամբ աշակերտի վերաբերմունքի, նրա կողմից կարգապահությունը խախտելու մասին: Ծնողները ծանոթանում են և ստորագրում այն: Հետո նրանք նկատի են ունենում դասղեկի դիտողությունները և օգնում երեխաներին՝ վերացնելու թերությունները:

Ուսուցիչների և ծնողների փոխներգործության ակտիվ մեթոդներ կարող են լինել փորձի փոխանակման համաժողովները, հարց ու պատասխանի երեկոները, բանավեճերը, ուսուցիչների և մասնագետների (բժիշկներ, հոգեբաններ, ուսուցչի օգնականներ և այլն) հետ հանդիպումները:

Դասղեկը ծնողներին ներգրավում է դպրոցի կառավարման և դասարանի գործունեության կազմակերպման հետևյալ տիպի աշխատանքներում.

- ✓ Երեխաների դաստիարակությանը վերաբերող դպրոցական կյանքի հիմնախնդիրների քննարկում և լուծում,
- ✓ Ծնողների մասնակցություն դաստիարակչական աշխատանքներին և միջոցառումներին, ուսումնական կաբինետների ձևավորմանը, արտադասարանական աշխատանքների կազմակերպմանը,
- ✓ Ծնողների մասնակցություն դպրոցում և դասարանում ինքնակառավարման մարմինների (ծնողական ժողովներ,

[3] Բաբանսկի Յու., Մանկավարժություն, 1-ին հատոր, 1996, էջ 54:

համաժողովներ, ծնողական կոմիտեներ և այլն) ստեղծմանը, դրանց գործունեության կազմակերպմանը:

Ուսուցիչների, դասղեկների կարևորագույն խնդիրներից են ընտանիքի միասնության ու համախմբվածության նախադրյալների ստեղծումը, ծնողների և երեխաների փոխըմբռնման մթնոլորտի, ընտանիքում երեխաների համար հարմարավետ միջավայրի նախապատրաստումը, նրանց համատեղ գործունեության և շփման հմտությունների ձևավորումը: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ծնողների և երեխաների համատեղ ստեղծագործական միջոցառումների կազմակերպումը՝ նվիրված ընտանեկան լավագույն ավանդույթների և սովորությունների ներկայացմանը:

Ուսուցիչն իրականացնում է նպատակասլաց գործունեություն երեխաների և նրանց ծնողների միջև ներդաշնակ հարաբերությունների ձևավորման ուղղությամբ, ստեղծում ծնողների նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակման իրավիճակներ: Ծնողների հետ համագործակցությունը ժամանակակից դպրոցի զարգացման, կրթական նպատակների իրականացման և երեխաների կրթության առավել նպաստավոր պայմանների ու կրթական միջավայրի ստեղծման կարևոր նախադրյալ է: Իսկ ինչպես արթնացնել ուսուցիչների նախաձեռնողականությունը, դպրոցական կոլեկտիվում ստեղծել մանկավարժական նախագծի իրականացման ուղղությամբ գործունեության դրական դրդապատճառներ: Այս ամենը հնարավոր է դասղեկների կողմից երիտասարդ մանկավարժներին կոնկրետ աջակցություն ցուցաբերելու միջոցով[4]: Սկսնակներին հարկավոր է օգնել դասարանական կամ դպրոցական ծնողական ժողովներում զեկուցումներ կամ ելույթներ նախապատրաստելիս: Այս ուղղությամբ աշխատանքի նախագծման ժամանակ պետք է ամրապնդել դպրոցի և ծնողների փոխհարաբերությունները, ձևավորել արդյունավետ գործող ծնողական խորհուրդ՝ հավասարապես բաժանելով կրթության որակի պատասխանատվությունը: Համագործակցության համակարգում իրականացվում են.

- ✓ դասարանական և համադպրոց ական ծնողական ժողովներ,
- ✓ անհատական խորհրդատվություն,
- ✓ հանդիպումներ մանկավարժների և հոգեբանների հետ:

Ծնողների խորհրդատվությունն այսօր դպրոցի ու ընտանիքի համագործակցության ամենաարդիական և պահանջված ուղղությունն է: Ծնողների մեծամասնությունը ինքնակրթության համար ժամանակ չի ունենում:

---

[4] Михайленко О.И., Кабардино-Балкарский государственный университет им. Х.М. Бербекова, Общая педагогика, электронный учебник, 2008, էջ 11-12:

Սովորաբար խորհրդատվության համար դիմում են դպրոցին: Որպես կանոն, դա լինում է հատկապես ծայրահեղ իրավիճակներում՝ երեխայի վատ առաջադիմության կամ վարքի դրսևորման ժամանակ: Խորհրդակցության հիմնական նպատակը ծնողների կողմից երեխայի հիմնախնդիրների, նրա անձի մասին ամբողջությամբ ավելի խոր և օբյեկտիվ պատկերացում ունենալն է, սեփական դաստիարակչական ուղեծրի ու կրթական գործընթացի մյուս մասնակիցների հետ շփման միջոցների որոշումը:

Մեր կարծիքով՝ դպրոցական համակարգում պետք է գործի հոգեբանական, մանկավարժական և բժշկական խորհրդատվության ծառայություն, որը կստանձնի բեռնվածության մասը և բավական հաջողությամբ կլուծի ծագող հիմնախնդիրները: Հոգեբանը կամ սոցիալական մանկավարժը կարող են օգնել՝ որոշելու ծնողների հետ համագործակցության նպատակը: Հատկապես հենց նրանք են տիրապետում այնպիսի տեղեկույթների, որոնք երբեք չեն ձեռք բերվում հարցման միջոցով: Ակնհայտ է, որ դժվար է դպրոցում իրականացնել յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ փոխներգործությունն ու համագործակցությունը իրենց մեջ ներառող հիմնախնդիրների ամբողջ ծավալով: Սակայն հարկավոր է հոգեբանամանկավարժական ուղեկցությունը կազմակերպել այնպես, որ երեխան օգնություն և փոխըմբռնում որոնի ընտանիքում: Այդպիսի ծառայության նպատակը, թերևս, երեխաների կրթության, դաստիարակության և զարգացման նպաստավոր պայմանների ապահովումն է, իսկ ամենակարևոր պայմաններց մեկը, անշուշտ, դպրոցի ու ընտանիքի համագործակցությունն է:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության ու փոխներգործության ամենաարդիական և պահանջված ուղղություններից մեկն այսօր, թերևս, երեխաների ծնողների համար խորհրդատվությունների կազմակերպումն է: Մանկավարժական խորհրդատվությունները հիմնականում կրում են անհատական բնույթ: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբիրավիճակը դառնում է ծայրահեղ, ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքին ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը:

Ծնողների խորհրդատվության կազմակերպումը դպրոցում ունի իր առանձնահատկությունները: Մի կողմից այն խիստ անհատական է, մյուս կողմից էլ անհրաժեշտ է հետևել ծնողների և երեխաների դժվարություններին, որպեսզի մանկավարժական շտկողական գործունեությունը չլինի ժամանակավրեպ: Այսպիսի խնդիրների լուծման լավագույն տարբերակը դպրոցական հոգեբանի հաստիքի ստեղծումն է: Իսկ դպրոցի խնդիրը կլինի նմանատիպ տեղեկատվության

հավաքագրման մեխանիզմի մշակումը և համակարգային վերլուծությունը[5]: Ծնողների խորհրդատվությունը կարելի է կազմակերպել երկու տեսանկյունից՝ մեթոդական (այն ամենը, ինչ վերաբերում է ուսումնական ծրագրերի յուրացմանը, առանձին աշակերտների կրթական գործընթացի հետագծին, նոր ընդունված երեխաներին, օժտված երեխաների լրացուցիչ կրթությանը) և հոգեբանական (այն ամենը, ինչ վերաբերում է երեխայի անհատական առանձնահատկությունն երին ու նրա հանրայնացմանը):

Ծնողները մանկավարժական գիտելիքներ կարող են ձեռք բերել ոչ միայն դպրոցում կազմակերպվող ժողովներին և դասախոսություններին ներկա գտնվելով, այլև համապատասխան գրականություն ուսումնասիրելով: Տարբեր ժամանակներում հրատարակվել են բազմաթիվ գրքեր, բրոշյուրներ և հոդվածների ժողովածուներ՝ ընտանիքում երեխաների դաստիարակության վերաբերյալ[6]: Դասղեկի խնդիրներից մեկն էլ հրատարակված նյութերի մասին ծնողներին տեղեկացնելն է: Միաժամանակ կարելի է նրանց խորհուրդ տալ ռադիոյով ու հեռուստատեսությամբ լսել հաղորդումներ ընտանիքում երեխաների դաստիարակության թեմաների վերաբերյալ, ինչպես նաև և դիտել կինոֆիլմեր և ներկայացումներ:

Երկու դեպքում էլ անհրաժեշտ է պահպանել փոխվստահության, փոխադարձ հարգանքի, խորհրդատվության նկատմամբ հետաքրքրությունների, կոմպետենտության, ծնողների միջավայրում խնդիրներն ինքնուրույն լուծելու դիրքորոշումների մշակման, խորհրդատվությունների որակի ապահովման սկզբունքները: Գաղտնիք չէ, որ երեխաների ծնողները զբաղված մարդիկ են: Ուստի խիստ կարևոր է, որ խորհրդատվությունը կազմակերպվի նաև ծնողներին հարմար ժամերի, որպեսզի հնարավորություն ունենան միաժամանակ այլ խնդիրներ լուծել: Դպրոցում պետք է լինի հանդուրժողականության և հյուրընկալ ջերմ մթնոլորտ, քանի որ դպրոցի ու ծնողի համագործակցությունն սկսվում է դպրոցի նախասրահից:

Յուրաքանչյուր դպրոցում, անշուշտ, կան հատուկ ուշադրության կարիք ունեցող, անապահով կամ սովորական, բայց դժվարություններ ունեցող աշակերտներ: Նման պարագայում խնդիրը բավականաչափ թեթևանում է, եթե դպրոցում սոցիալական մանկավարժ է աշխատում: Ծնողների առաջին սեմինարին պետք է ներկայացվի դպրոցի գրադարանի, բուժկետի, բուֆետի աշխատանքի,

---

[5] Харламов И.Ф., Педагогика ,- М., 2004, էջ 41:

[6] Ղույումչյան Գ.Ե, <<Մանկավարժություն>>, գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005թ., էջ 54:

այնուհետև առաջարկվող կրթական ծրագրերը, անհրաժեշտ աղբյուրներն ու պաշարները՝ դրանց իրականացման տարբեր փուլերում: Աշակերտների ֆիզիկական և հոգեբանական բեռնվածության կանխարգելման և ճիշտ պլանավորման նպատակով հարկավոր է իրականացնել այդ թեմաներով տեղեկատվության տրամադրում: Բանն այն է, որ հաճախ ծնողների մրցակցությունը հանգեցնում է այն իրավիճակին, որ երեխային ստիպում են կատարել ուժերից վեր առաջադրանքներ: Դա էլ ունենում է հակառակ արդյունք: Խիստ կարևոր է այն բոլոր կարողությունների առանձնացումը, որոնք բնութագրական կլինեն միջին ցուցանիշներով՝ երեխայի առաջընթացի արձանագրման համար:

Ծնողների համար կազմակերպվող սեմինարները ենթադրում են քննարկումներ և գործընթացների ցուցադրումներ: Սեմինարներին մանկավարժները ևս լրացնում են իրենց գիտելիքները, բազմապատկում փորձը: Սեմինարների ավարտին խիստ կարևորվում է հետադարձ կշռադատող հայացքով քննարկման անցկացումը: Սեմինարների քննարկան թեմաներ կարող են դառնալ աշակերտների հարմարվելը կրթական գործունեության պայմաններին, երեխաների զարգացման տեմպերը և այդ ոլորտում հիմնախնդիրների ու խոչընդոտների բացահայտումը, դպրոցի, դասարանի նկատմամբ երեխայի վերաբերմունքը, երեխաների ինքնուրույնության զարգացումը, կրթական գործընթացում ուսուցման գործուն միջավայրի ձևավորումը, փոխօգնության և հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծումը և այլն: Ծնողների համար կազմակերպվող այդպիսի սեմինարների պրակտիկան ցույց է տալիս դրանց արդյունավետությունը:

Այսպիսով, մանկավարժները և ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ, և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձ: Ընտանիքում է ձևավորվում և մշակվում մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Ընտանեկան դաստիարակության բնորոշ սխալները

Դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից են կախված երեխայի կողմից իրականության ընկալումը, նրա հարաբերությունները շրջապատի մարդկանց հետ:

Երեխայի դաստիարկությունն իրականացվում է և՛ գիտակցաբար, և՛ անգիտակցաբար:

Գիտակցաբար դաստիարակությամբ զբաղվում են ընտանիքն ու դպրոցը, անգիտակցաբար՝ շրջապատը, հեռուստատեսությունը, համացանցը և այլն:

Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք քիչ թե շատ հետևողականորեն կազմակերպում էին տվյալ հանրության աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության, վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասունություն:

Շրջապատի մարդիկ այսպես թե այնպես ազդում են երեխայի մտքերի, արարքների և աշխարհընկալման վրա: Երեխաներն սպունգի պես ներծծում են այն ամենը, ինչ կատարվում է նրանց շուրջը: Մեծ հաճույքով կրկնում են շրջապատող մարդկանց և ծնողների խոսքերը, միմիկան, ժեստերը, վարքի ձևերը: Երեխաների դաստիարակության ընթացքում նրանց բնավորության այն գծերն ու պահվածքը, որոնք հակասում են ծնողի սկզբունքներին, հարկավոր է համապատասխանեցնել դրանց: Շատ ծնողներ հատկապես առաջին երեխան ունենալու ժամանակ հիմնականում անվստահ են լինում՝ վախենալով սխալ դաստիարակել, անվճռականություն են դրսևորում, ինչի արդյունքում ի հայտ են գալիս մի շարք բացթողումներ: Երբ երեխան զգում է ծնողի անվստահությունը, սկսում է

մանիպուլյացիայի ենթարկել նրան, ինչն էլ, բնականաբար, հիմք է ստեղծում համապատասխան բացասական վարքագծի ձևավորման:

Կարելի է պայմանականորեն առանձնացնել դաստիարակության ավտորիտար, դեմոկրատական և լիբերալ ոճերը:

Այն ծնողները, որոնց հատուկ է ավտորիտար դաստիարակությունը, սովորաբար ջղային են, դժգոհ, իշխող, կոպիտ, սահմանափակ են իրենց հույզերում և այլն: Ավտորիտար ծնողի համար երեխային գրկելը, համբուրելը, գովասանքի խոսքեր ասելը ճոխություն է և անընդունելի: Նման հարաբերություններում ծնողը միշտ ճիշտ է, որին պետք է երեխան անվերապահորեն ենթարկվի: Այսպիսի դաստիարակչական մեթոդներ կիրառող ծնողների երեխաները սովորաբար լինում են ըմբոստ, վախկոտ, ջղային, հեշտությամբ են հասակակիցների ազդեցության տակ ընկնում: Նման դաստիարակության արդյունքում տուժում են երեխա-ծնող հարաբերությունները, անխուսափելի են վեճերն ու տարաձայնությունները: Սովորաբար այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաները զուրկ են լինում մարդկային երջանկությունից, հոգեկան խաղաղությունից:

Լիբերալ ոճով գործող ծնողները ջերմ են և ծայրահեղ հուզական, բայց շատ սահմանափակ հսկողությամբ. քիչ են մասնակցում երեխայի կյանքին և հեշտությամբ տեղի տալիս նրա քմահաճույքներին: Լիբերալն առավել շահագրգռված է, որ երեխայի հետ չհակադրվի և չվիճաբանի: Նման ընտանիքներում մեծացող երեխաները լինում են անհանգիստ, ինքնագլուխ, իրենց կամքն են թելադրում ծնողներին, ինչպես նաև՝ թերահավատությամբ վերաբերվում նրանց: Ժամանակակից ընտանիքներում այսօր շատ հաճախ ենք հանդիպում լիբերալ ընտանիքների, որոնցում ծնողները գրեթե չեն մասնակցում երեխայի առօրյային:

Դեմոկրատ ծնողները զգացմունքներով ջերմ են, հանգիստ, հսկողության մեջ՝ չափավոր, քաջալերում են երեխային, հաճախ զրուցում նրա հետ, ինչի հետ մեկտեղ կողմնակից են նաև երեխայի անկախությանը: Դեմոկրատական ընտանիքներում ծնող-երեխա հարաբերություններում իշխում է փոխադարձ հարգանքը: Այսպիսի ընտանիքներում մեծացած երեխաներն ինքնավստահ են (չշփոթել ինքնահավանության հետ), ի վիճակի են պատասխանատվություն կրել, անկախ են, անկեղծ: Բնականաբար, երեք ոճերից ամենաարդյունավետը հենց վերջինն է, որում կան մի շարք նրբություններ և կանոններ.

- հարկավոր է երեխայի հանդեպ լինել սիրալիր: Փոքրիկի հանդեպ սերն ու գուրգուրանքը թույլ են տալիս նրան պաշտպանված զգալ, վստահ՝ իր անձի նկատմամբ: Ցավոք, հաճախ ենք նկատում, որ հատկապես տղա երեխաների հանդեպ որոշ ծնողներ զգուշությամբ են գուրգուրանքով վերաբերվում

սխալմամբ մտածելով, որ դա նրանց մեջ տղամարդկային գծեր չի ձևավորի: Մինչդեռ իրականում փոքր տարիքում դաստիարակության հարցում նշանակություն չունի երեխայի սեռը, բոլորն էլ զգում են ծնողների ուշադրության, հոգատարության ու սիրո կարիքը: Գրկախառնությունը թույլ է տալիս երեխային պաշտպանված ու սիրված զգալ, ինչն էլ ապահովություն է ստեղծում նրանց համար.

- ծնողների կողմից առաջադրված պահանջները պետք է լինեն մշտական, այսինքն՝ դրանք չպետք է տրամադրության հետ փոխվեն: Բացի այդ, բոլոր տեսակի պահանջները պետք է համապատասխան լինեն երեխայի ֆիզիկական, մտավոր և հոգեկան հնարավորություններին: Հակառակն անհնար կլինի իրականացնել, միաժամանակ կխեղաթյուրի երեխայի կամքի ձևավորումն ու նպատակասլացությունը.
- հարկավոր է թողնել, որ փոքրիկն ինքնուրույն գնահատի իր արարքները: Նույնիսկ սխալ գործելու դեպքում, ինչն, իհարկե, անխուսափելի է, պետք չէ շտապել սաստելով նրան կանգնեցնել: Թույլ տվեք ավարտին հասցնի այն, հետո նոր բացատրեք, թե ինչը ճիշտ չի արել: Իհարկե, խոսքն այն սխալների մասին չէ, որոնք կարող են վնաս հասցնել շրջապատին կամ երեխային: Դաստիարակության մեջ այս ռազմավարությունը կնպաստի փորձի ձեռքբերմանը և կբարձրացնի երեխայի ինքնագնահատականը:

Ձախողումը փորձ է, որն անհրաժեշտ է ապագա նպատակներին հասնելու համար: Եթե երեխան պարտվել է որևէ մրցույթում, բացատրեք նրան, որ իր ժամանակավոր անհաջողությունը շատ մեծ փորձ է ապագայում ավելի լավ արդյունքների հասնելու համար: Երեխան պետք է ժամանակին տեղեկանա, որ ամեն մարդ ունի կոնկրետ ընդունակություն և, որքան շուտ նա սկսի զբաղվել դրանով ու զարգացնել, այնքան ավելի մեծ հաջողության կհասնի: Այս նպատակով պետք է երեխային թույլ տալ իր ուժերն ու հնարավորությունները փորձել տարբեր բնագավառներում, որից հետո նոր եզրակացնել, թե որտեղ կարող է նա առավելագույնս դրսևորվել:

Դաստիարակությունը այնպես պետք է կառուցել, որ երեխայի մոտ գիտելիքի պահանջ ձևավորվի: Երեխան պետք է իմանա, որ նա կարող է ճանաչել աշխարհը, ինչ-որ նոր հետաքրքիր բան հայտնաբերել, կարևոր հայտնագործություններ անել, ինչից հաճույք կստանա: Դրանով ձևավորվում է հետաքրքրությունը: Օգնեք երեխային ընտելանալ կարգուկանոնի: Խոսքը ոչ միայն դպրոցական կամ ընտանեկան կարգապահության մասին է, այլև՝ շրջապատող աշխարհի, արտաքին միջավայրի:

Մշտապես և ամենուր կարգապահությանը հետևելուց, այս որակը կվերածվի սովորության:

Որոշ սնոտիապաշտ և վախկոտ ծնողներ, մտածելով, որ կարող են կորցնել իրենց զավակներին, ինչը երբեմն պայմանավորված է նրանց որոշ քրոնիկ հիվանդություններով կամ հաճախակի հիվանդանալով, թույլ են տալիս նրանց անցնել անթույլատրելիության սահմանները, միայն թե իրենց լավ զգան: Սա շատ վտանգավոր երևույթ է դաստիարակության մեջ, ինչը երեխայի մոտ ձևավորում է եսասիրություն, կամակորություն և այլ բացասական որակներ:

Դաստիարակության ոլորտում ամուսինների միջև ընդհարումների առկայությունը նույնպես վնասում է երեխային: Այս դեպքում ծնողները երեխայի դաստիարակության հարցում չեն կարողանում ընդհանուր հայտարարի գալ, ինչն էլ անընդհատ բախումների առիթ է հանդիսանում: Արդյունքում՝ երեխան դուրս է մնում հսկողությունից՝ չկողմնորոշվելով, թե ծնողներից ով է ճիշտ:

Որոշ դեպքերում ծնողները, տեսնելով, որ երեխան մեծանում է, վախենում են նրանից հեռանալուց, ինչն էլ թաքնված պատճառ է հանդիսանում, որպեսզի նրա մոտ սերմանեն մանկական որակներ: Այսպես, կարող են նույնիսկ դեռահասության տարիքում չափից դուրս հոգատարություն դրսևորել, նրանց հետ խոսելու ընթացքում ձայնի ելևէջների մեջ փոփոխություն մտցնել, ամեն քայլափոխի մանուկի տեղ դնելով՝ հետևել և այլն: Այսօրինակ պահվածքը կարող է հանգեցնել ծնող-երեխա հարաբերությունների խաթարմանը, քանի որ ամեն տարիք ունի դաստիարակության իր պահանջները:

Երեխայի հետ հաճախ զրուցելը, նրա կարծիքն ու խորհուրդը հարցնելը կարևոր պայման են դաստիրակության գործում: Սա կբարձրացնի նրա ինքնագնահատականն, ու նա ավելի շատ կվստահի ծնողին:

3. Գործնական համատեքստ

Ծնողական ժողովների կազմակերպում

Դասվարի կողմից դպրոցի ու ծնողների միջև համագործակցության կազմակերպման կարևոր ձևերից է հանդիսանում ծնողական ժողովների կազմակերպումն ու իրականացումն: Ծնողական ժողովը կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը.

1. Զրույց աշակերտների առանձնահատկությունների, նախասիրությունների, հետաքրքրությունների շուրջ (նպատակը՝ հստակեցնել աշակերտների անհատական պահանջները՝ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար, նպաստել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը):

2. Ծնողների ակնկալիքների հստակեցում (նպատակը՝ օգնել Դասվարին՝ դաստիարակչական և կրթական գործընթացն առավել նպատակաուղղված և արդյունավետ կազմակերպելու համար):

3. Կազմակերպչական հարցեր:

4. Աշակերտների առաջադիմության ամփոփում:

5. Զրույց-քննարկում՝ տվյալ տարիքային խմբի աշակերտների ընդհանուր հոգեբանական առանձնահատկությունների և դրանք հաշվի առնելով՝ տանը և դպրոցում դաստիարակության արդյունավետ ռազմավարություն ընտրելու շուրջ: Դասվարը կարող է նաև մասնագետ հոգեբանի հրավիրել՝ ծնողների հարցերին պատասխանելու համար:

6. Զրույց-քննարկում՝ առողջ ապրելակերպի խնդիրների շուրջ (Դասվարը կարող է մասնագետ բժիշկ հրավիրել): Զրույցի թեման՝ աշակերտի մոտ առողջ ապրելակերպի վարքագծի խթանումը տանը և դպրոցում (սեռական դաստիարակություն, անձնական հիգիենայի կանոններ, ժամանակի ռացիոնալ տնօրինում)[7]:

Ծնողական ժողովները կարող են ունենալ նաև այլ կառուցվածք ու բովանդակություն, բայց կարևոր նշանակություն ունի ծնողական ժողովների ընթացքում ուշադրություն դարձնել աշակերտների մոտ ի հայտ եկած թերություններին ու փորձել դրանց համար գտնել լուծման ուղիներ:

Նշվածներից կարող ենք անել այն եզրակացությունը, որ սովորողների ներդաշնակ ու բազմակողմանի զարգացման համար կարևոր դերակատարություն ունեն ինչպես ուսուցիչները, այնպես էլ ծնողները և ակտիվ ու բազմակողմանի

[7] Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, էջ 1-146, Երևան, 2008, էջ 54-55

զարգացած քաղաքացու ձևավորումը բարդ, երկարատև ու շարունակական գործընթաց է:

Մեփական փորձառության ներկայացում

Առաջին դասարանում առաջին ծնողական ժողովի համար կիրառել եմ հետևյալ հարցաթերթիկը:

Հարցաթերթիկ

ՈՒՂԵՐՁ

Հայտնի է, որ ով գիտի կարևոր տեղեկություններ երեխաների մասին, նա էլ տիրապետում է դաստիարակչական իրավիճակին: Դասղեկի համար այդպիսի տեղեկությունները նրա մասնագիտական հարստությունն է, որոշումներ ընդունելու հիմքը, ուստի խնդրում եմ լինել հնարավորինս անկեղծ հարցերին պատասխանելիս:

1 . ----------

Աշակերտի ազգանունը , անունը , հայրանունը

2 . ----------

հասցեն , հեռախոսը

3 . Ծնողները՝

ա . հայրը՝ ----------

ազգանունը , անունը , հայրանունը , կրթությունը , մասնագիտությունը

աշխատանքի վայրը , հեռախոսի համարը , անձնագրի տվյալները

բ .մայրը՝ ----------

ազգանունը , անունը , հայրանունը , կրթությունը , մասնագիտությունը

աշխատանքի վայրը , հեռախոսի համարը , անձնագրի տվյալները

4 . Ընտանիքը կազմված է _____ հոգուց :
5 . Երեխան ընտանիքի անդամներից ու՞մ հետ է ավելի շատ կապված :

---
6 . Մանկապարտեզ , քոլեջ կամ նախակրթարան հաճախե՞լ է , թե՞ ոչ :

---
7 . Ի՞նչ հակումներ ունի ձեր երեխան :

---
8 . Ի՞նչ հիվանդություններ է ապրել :

---

9 . Ո՞ր տարիքում է սկսել խոսել :

---

10 . Երեխայի բնավորության դրական և բացասական գծերը :

--- ---

11 . Ձեր երեխան տանն առանձին անկյուն ունի՞: ---
---

12. Ի՞նչ խմբակների է հաճախում: ---
---
13. Ինչպիսի՞ն կցանկանաք տեսնել ձեր երեխային 4 տարի հետո:

---
14. Ընտանիքի կազմը (լիարժեք, թերի, մեծ, ծնողազուրկ,), սոցիալական վիճակը՝ ապահով, անապահով:

---
15 . Ի՞նչ հարց կցանկանայիք քննարկել :

Այս հարցաթերթիկի օգնությամբ ստացա երեխաների և նրանց ընտանիքների վերաբերյալ մանրամասն և կարևոր տեղեկատվություն: Այդ ամենը նպաստեց առաջիկա ուսումնադաստիարակչական աշխատանքները պլանավորելու և կատարելու համար:

Կիրառել եմ նաև հետևյալ բովանդակությամբ հարցաթերթիկը.

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Տրված հասկացությունները դասավորեք ըստ ձեր կարևորության:

Ինձ համար ամենակարևորը այն է, որ երեխաս ունենա լավ…

- սնունդ
- առողջություն
- ընկերներ
- աշխատանք
- հարազատների հետ լավ հարաբերություններ
- սեր
- կրթություն
- փող
- տուն
- շրջապատ

Այս հարցաթերթիկն օգնեց ինձ ուսումնասիրել երեխաների ընտանեկան դրությունը, ընտանիքում տիրող մթնոլորտը, նրա բարոյական նորմերը:

Ընտանիքում երեխաների ու ծնողների փոխհարաբերությունները որոշելու համար կիրառել եմ **«Երեխան ծնողների աչքերով, ընտանիքը՝ երեխայի աչքերով»** թեստը:
Թեստը անցկացրել եմ զուգահեռաբար և՛ երեխաների, և՛ ծնողների հետ:

Ծնողների հարցում

Նկարագրեք, թե ի՞նչ եք զգում Ձեր երեխայի անունը լսելիս:

Երեխաների հարցում
Նկարագրեք, թե ի՞նչ եք զգում «Իմ ընտանիքը» բառակապակցությունը լսելիս:

Տեղեկությունները, որոնք միաժամանակ ստացա երեխաներից և ծնողներից, օգնեց ինձ ճիշտ գնահատելու երեխաների վիճակը ընտանիքում, ինչպես նաև սեփական երեխային օգնելու, նրա խնդիրներն ու ներքին հոգեվիճակը հասկանալու ծնողի ցանկությունը:

Հետազոտության արդյունքների հիման վրա անցկացրեցի թեմատիկ խորհրդատվություններ այն խնդիրների շուրջ, որոնք նույնն էին մի քանի ընտանիքներում:

4. Ամփոփում

Այսպիսով կարող ենք փաստել, որ դպրոցի և ընտանիքի փոխազդեցության նպատակասլաց գործունեությունը նպաստում է երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման նպատակով ընտանիքի յուրահատուկ դատիարակչական հնարավորությունների առավել լրիվ իրականացմանը: Ծնողների ու երեխաների փոխգործակցության վրա մանկավարժական ազդեցության հիմքը ծնողների և ուսուցիչների նպատակների միասնությունն է և դաստիարակչական գործառույթների համաձայնեցվածությունը:

Կարևոր նշանակություն ունի դասվարների աշխատանքը ծնողների հետ: Ծնողների հետ իր ամբողջ գործունեությունը դասվարը կազմակերպում է դասարանական ծնողական կոմիտեի, ինչպես նաև տվյալ դասարանում աշխատող ուսուցիչների միջոցով: Դասարանական ծնողական կոմիտեի գործառույթները հիմնականում նույնն են, ինչ որ համադպրոցականինը, միայն այստեղ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծնողների ու աշակերտների նկատմամբ անհատական մոտեցմանը, դպրոցականների ուսումնասիրությանը, ուսման մեջ ետ մնալու և անկարգապահության պատճառների վերացման ուղղությամբ միջոցառումների իրագործմանը, աշակերտների ստեղծագործական ակտիվության զարգացմանը:

Դասվարը ծնողական կոմիտեի հետ համատեղ պլանավորում և իրագործում է ծնողների դասարանական մանկավարժական ընդհանուր ուսուցումը՝ նրանց ծանոթացնելով դաստիարակության ձևերի ու մեթոդների հետ ընտանիքում, այդ աշխատանքի առաջավոր փորձին:

Դասվարը պարբերաբար, տարին երկու անգամ՝ ամառային ու ձմեռային արձակուրդներին համատեղ խորհրդակցություններ է անցկացնում դասարանի ուսուցիչների, ծնողների ակտիվի, դպրոցի բժշկի հետ, իսկ առաջին դասարանում նաև այն մանկապարտեզների ներկայացուցիչների հետ, որտեղ դաստիակվել է այդ դասարանի երեխաների մեծամասնությունը: Մանկավարժական այդ կոնսիլիումներում քննարկվում են դասարանի աշակերտների շատ համառոտ բնութագրությունների նախագծերը, վերհանվում են ուսման մեջ ետ մնալու կամ առանձին աշակերտների վարքի թերությունների պատճառները, իսկ այնուհետև կոլեկտիվ միջոցառումներ են նախատեսվում ուսուցիչների, ծնողների, աշակերտական ակտիվի և այլ ուժերով դրանք հաղթահարելու ուղղությամբ:

Նպատակահարմար է ծնողների հետ համագործակցությունը կազմակերպել խմբային և անհատական ձևերով: Ծնողական ժողովներում սկիզբ առած բացատրական աշխատանքը պետք է շարունակել տանը և դպրոցում ծնողների հետ անհատական հանդիպումների ժամանակ: Ծնողների հետ անհատական զրույցները հաճախ թելադրում են կոլեկտիվ աշխատանքի ձևեր ու բովանդակություն՝ նպաստելով բոլոր ծնողների հետ անցկացվելիք անհրաժեշտ միջոցառումների նախանշմանը և կազմակերպմանը: Երբեմն ծնողական ժողովներն ընթանում են սակավամարդ կազմով: Այդպես լինում է այն դեպքում, երբ դասղեկն անհրաժեշտ շփման եզրեր չի փնտրում աշակերտների ընտանիքների հետ: Հարկավոր է ժողովի օրակարգի մասին նախապես տեղյակ պահել ծնողներին:

Ծնողներին պետք է հրավիրել ոչ միայն այն ժամանակ, երբ աշակերտը խախտել է ընդհանուր կարգապահությունը, կամ սկսել է վատ սովորել, այլև պարբերաբար՝ տվյալ սովորողի արտադասարանական ընթերցանությունն արդյունավետ կազմակերպելու, նրան հանրօգուտ աշխատանքի մեջ ընդգրկելու, երեխայի ընդունակությունը որևէ բնագավառում զարգացնելու մասին պայմանավորվելու նպատակով: Անկարգապահ աշակերտների ծնողների հետ հարկավոր է համաձայնության գալ դպրոցականների վրա ներգործելու միասնական պահանջներ և մանկավարժորեն արդարացված միջոցներ կիրառելու մասին: Ընդ որում, պետք է միշտ հիշել, որ առավել արդյունավետ է աշակերտների վրա ներգործման խելացի միջոցների մասին հանգիստ, գործարար զրույցը ծնողների հետ, քան հանդիմանությունները և բողոքները նրա հասցեին:

5. Օգտագործված գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու., Մանկավարժություն, 1-ին հատոր, 1996թ.
2. Դաստիարակչական աշխատանքը դպրոցում, աշխ. խմբ. ղեկ. Մ. Դավթյան, Երևան, 2008թ.
3. Ղույումչյան Գ.Ե, <<Մանկավարժություն>>, գիրք 1-ին, էջ 14, Երևան, 2005թ.
4. Методика воспитательной работы. Под редакцией В.А. Сластенина ,- М., 2002.
5. Михайленко О.И., Кабардино-Балкарский государственный университет им. Х.М. Бербекова, Общая педагогика, электронный учебник, 2008.
6. Харламов И.Ф., Педагогика,- М., 2004.